

վայրի մը մէջ, ուսկից խոյս տուած էին յարգանքը, երկիւղածութիւնը, պատիւը:

Կոլոտ, նետուեցաւ այն սոսկալի վիճակին մէջ եւ գրեթէ երկու տարւան անձնանուէր յոգնութիւններով՝ նախանձելի ըրաւ կրօնական ջերմեռանդութեան այդ խառնարանը: Եւ երբ Շղթայակիր, իր պարզութեան մէջ խորագէտ, անկեղծ այն խորունկ-կրօնաւորը, իր շղթայով բոլոր սրտերը կապեց Երուսաղէմին, Կոլոտ աւելի եւս մեծցաւ: Ամէն ազգի մարդիկ հիացումով դիտեցին նկարագրի մարդը:

* * *

Պոլիս, ուր Հայոց Պատրիարքութիւնը ամօթալի իրականութիւններու մէջ ազտոտուած էր, աշխարհական եկեղեցական զիրար կը բզբտէին Պատրիարք ըսուելու համար: Պոլսոյ պատրիարքութիւնը, որ Մեծն Փաթիհի շնորհներով գոյութիւն առած՝ կամաց կամաց բովանդակ թուրքիոյ Հայոց կրօնական-եկեղեցական գործերու կենդրոն պիտի ըլլար, բոլորովին անգիտակ իր դիրքին՝ անձնական տգեղութիւններու թատր մ'եղած էր: Ինչ սոսկալի բանագործութիւններ են անոնք, որուն դերասաններն եղան Կոլոտի նախորդները: Կրօնական-եկեղեցական երկպառակութիւններ հանդիսաւորապէս կը ջլտտէին եկեղեցին. Կրթութիւն, դաստիարակութիւն, եկեղեցական շնորհ, հրապարակային կեանք, ասոնք առասպելներ էին պարզապէս:

Կոլոտ միանգամայն վերջ տուաւ այն խաղք ու խայտառակ Պատրիարքութեան: Սուլթան Ահմետի եւ Սուլթան Մահմուտի պէս մեծ կայսրներու շնորհները հայ ժողովուրդին վրայ առաջացընելու միջնորդ եղաւ: Բազմաթիւ եկեղեցիներ շինուեցան եւ վերաշինուեցան: Երուսաղէմի պատրիարքութեան դիրքն ու իրաւունքները Սուրբ երկրի